

ՆԱԽԱԾԱՆՑՈՒՄԸ ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ  
ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՄԻՋՈՑ ԱՐԴԻ ՖՐԱՆՍԵՐԵՆՈՒՄ

Նախածանցումը համադրական բառակազմության կարևորագույն միջոցներից է ժամանակակից ֆրանսերենում, որն, ի տարբերություն վերջածանցման, զուգորդելիության ավելի լայն ընդգրկում ունի:

Ֆրանսերենի նախածանցների վերաբերյալ լեզվաբանների կարծիքները տարբեր են եղել: Այսպես, Ֆրիդրիխ Դիցը և Արսեն Դարմեստեները, հետևելով լեզուների ուսումնասիրության պատմական մեթոդին, նախածանցումը համարում էին բառաբարդման տարատեսակ, առաջնորդվելով այն սկզբունքով, որ ֆրանսերենի նախածանցների մեծագույն մասը ծագել է լատիներեն բառերից:

Հետագայում լեզվաբանները հրաժարվեցին ստուգաբանական ելակետ ունեցող այս հայեցակետից:

Քրիստոֆեր Նիրոպը, այնուհետև Ֆերդինանդ Բրյունոն և Ալբեր Դոզան նախածանցումը իրավացիորեն ընդգրկեցին ածանցական բառակազմության մեջ:

Որոշ լեզվաբաններ /Շ. Բալլի, Ժ. Մարուզո, Վ Բրյունդալ/ այն կարծիքին են, թե արդի ֆրանսերենում բառածանցումը բառակազմության արգասավոր միջոց չէ: Ինչու: Արդի ֆրանսերենն իր կառուցվածքով վերլուծական միտում ունեցող լեզու է, որն արտահայտվում է ոչ միայն նրա քերականության, այլև բառապաշարի մեջ: Հին ֆրանսերենի համեմատությամբ զգալի չափով աճել է բառապաշարային վերլուծական միավորների տեսակարար կշիռը, ընդ որում, հին ֆրանսերենի շատ բառեր ժամանակի ընթացքում փոխարինվել են նկարագրական – վերլուծական միավորներով: Բերենք բայական կազմությունների մի քանի օրինակ, քանի որ վերջիններս գերակշռող են.

**aconter - tenir compte**

**acorder - mettre d'accord; être d'accord**

**acoster - mettre à côté**

**anuitier - faire nuit**

**arouter - se mettre en route** և այլն:

Ձուգահեռ ձևերից առաջինները հին ֆրանսերենի համադրական կազմություն ունեցող բայերն են, իսկ երկրորդները արդի ֆրանսերենի համապատասխան վերլուծական ձևերը: Ներկայիս ֆրանսերենի՝ դեպի վերլուծական կառույցներն ունեցած միտումը ի հայտ է գալիս նաև ոչ բայական կազմությունների մեջ: Վերը նշված լեզվաբանները բառապաշարային վերլուծական միավորների գործածությունը բացատրում են համադրական բառակազմության, մասնավորապես բառածանցման բնագավառում արդի ֆրանսերենի ունեցած միջոցների ու հնարավորությունների հարաբերական աղքատությամբ: Նման բացատրությունը, սակայն, մասնակիորեն է պարզաբանում երևույթի էությունը: Սրան անհրաժեշտ է ավելացնել նաև այն, որ ֆրանսերեն բառերից շատերը կարճ են /միավանկ կամ երկվանկ / և բազմիմաստ, ձևաբանորեն պատճառաբանված չեն և հաճախ ունեն համանուններ: Նշված առանձնահատկությունները զգալիորեն մեծացնում են բառի կախումը խոսքաշարից, մի հանգամանք, որ դառնում է բառապաշարային վերլուծական միավորների առաջացումը պայմանավորող ու խթանող կարևորագույն գործոն:

Վերլուծական կազմությունները սովորական բառերից տարբերվում են իրենց բազմավանկությամբ, հետևաբար՝ հնչյունական ինքնուրույնությամբ, պատճառաբանվածությամբ և հաճախ նաև մենիմաստությամբ: Ահա այն հիմնական դրդապատճառները, որոնցով կարելի է բացատրել արդի ֆրանսերենում վերլուծական կառույցների գործածության անհրաժեշտությունն ու տարածվածությունը:

Սակայն նորագույն շրջանի այլ հեղինակներ /ժ.Դյուբուա, Ա.Միտերան և ուրիշներ /նշում են, որ բառածանցման արդյունավետությունը գնահատելիս անհրաժեշտ է տարբերակված մոտեցում ցուցաբերել: Նրանք

գտնում են, որ այսօր գիտության և հրապարակախոսության ասպարեզներում ածանցումը նորաբանությունների ստեղծման կարևորագույն միջոց է ֆրանսերենում: Այդ են ապացուցում նաև մեր ուսումնասիրության արդյունքները:

Արդի ֆրանսերենի ամենաարդյունավետ նախածանցներից են.

*a-*/ապ-, ապա-, *anti-*/հակ-, հակա-, *auto-*/ինքն-, ինքնա-, *co-*/համ-, համա-, *da-*, *das-* /ապ-, գերծ-, *multi-* /բազմ-, բազմա-, *re-* /վեր-, վերա-, *rélé-*/հեռ-, հեռուստ-/ և այլն: Օրինակ.

**agrammatical** /1965/ - *ապաքերականական* /ոչ քերականական/

**acalorique** /1976 /-*ապակալորիական* /սնունդ, որն իր մեջ չի պարունակում կալորիականություն /

**antinucléaire** /1960/ - *հակամիջուկային*

**antipollution** /1970/ - *հակասղտոտում* /պայքար աղտոտման դեմ/

**antipsychiatrie**/1970/-*հակահոգեբուժություն* /տեսություն, որի կողմնակիցները դեմ են հիվանդին հոգեբանության մեթոդներով բուժելուն և գտնում են, որ հնարավոր չէ մարդուն բուժել՝ թափանցելով նրա հոգեկան ներաշխարհը/

**autocollant** /1971/ - *ինքնսկաչուն* / փոքրիկ թղթեր, որոնք ունեն կաչուն հատկություն և կարող են փակցվել տարբեր առարկաներին:

**autoconcurrence** /1973/-*ինքնակրակցություն*

**autogestion** /1960/ - *ինքնակառավարում*

**coprésident** /1965/ - *համանախագահ*

**coréalisateur;-trice**/1974/-*համակատարող* /որևէ ծրագիր հավասար իրավունքներով իրականացնողներից յուրաքանչյուրը /

**coresponsable**/1965/-*համակատասխանատու* /որևէ ծրագրի, գործի իրավահավասար պատասխանատուներից յուրաքանչյուրը/

**dé légitimer** /1980/ - *իրավազերծել*

**dépolluer** /1970/ - *աղտազերծել*

**déstabiliser** /1970/ - *ապակայունացնել*

déréglementer /1980/ - *ապակամոնակարգել*, ազատականացնել  
désinformation /1954/ - *ապատեղեկատվություն*, *ապալրատվություն*  
multiculturel /1980/ - *բազմաձևակութային*  
multipropriété /1965/ - *բազմատնօրինություն* /փայատիրություն/  
multisalle /1975/ - *բազմասրահ* /կինոթատրոն/  
reprogrammer/1975/ - *վերածրագրավորել*  
restructuration/1963/ - *վերակազմավորում*, *վերակառուցում*  
téléachat /1987/ - *հեռուստազնում* /զնումների կատարում հեռու-  
տատեսության միջոցով/

téléconférence /1982/ - *հեռուստաբանավեճ*, և այլն:

Ֆրանսերենի նախածանցավոր նորակազմություններն ու դրանց հայերեն համարժեքները դիտարկելիս նկատելի է օտար բազմիմաստ ծնույթի փոխարինում նրա զանազան նշանակությունները կամ նրբիմաստներն արտահայտող մայրենի տարբեր ծնույթներով: Նպատակը պարզ է՝ թե՛ ձևաիմաստային, թե՛ բովանդակային և թե՛ բաղադրիչների զուգորդելիության առումով հայերեն թարգմանությունը ներդաշնակել մայրենի բառակազմությանը և դարձնել արդյունավետ: Այսպես, ֆրանսերենի վերոհիշյալ *dé* – նախածանցը բազմիմաստ է և ունի հեռացնելու, անջատելու, բաժանելու, զրկելու, ինչպես նաև հակառակ գործողության նշանակություններն ու դրանց երանգները, որոնք հայերեն թարգմանություններում արտահայտվում են հնարավոր համարժեքների շարքով.

décriminaliser - հանցազերծել

dénucléariser - միջուկազերծել

dénucléarisation - միջուկազերծում

démédicaliser - դեղազերծել

démédicalisation - դեղազերծում

désidéologiser - գաղափարազրկել

déflécteur - հողմաշեղ

démontable - դյուրանջատ

Այս և այլ օրինակներում հստակ երևում է ածանցի փոխարինումը արմատահիմքերով, ինչն ապացուցում է հայերենի բառակազմական ճկունությունը:

Արդի ֆրանսերենի նախածանցավոր նորակազմություններն ընդգրկվում են իմաստային որոշակի ենթահամակարգերում. իսկ նրանց հայերեն համարժեքներն արտահայտվում են ոչ միայն ածանցների միջոցով, այլ նաև ածանցական գործածություն ստացած կամ այդ ճանապարհին գտնվող արմատահիմքերով:

Արդի ֆրանսերենի նախածանցավոր նորակազմություններն ընդգրկվում են հիմնականում բայական, գոյականական և ածականական ենթահամակարգերում, սրանցից բայական և գոյականական ենթահամակարգերն են, որոնց առավել բնորոշ է նախածանցումը:

Ինչ վերաբերում է ժամանակակից հայերենին, ապա այն պատկանում է այն լեզուների թվին, որոնք բառակազմական մեծ հնարավորություններ ունեն: Բառաբարդման գրեթե անսպառ հնարավորությունները բառակազմական կաղապարների ու բաղադրական հիմքերի բազմազանությամբ, ածանցների հարստությունն ու ածանցական բառակազմությունների ան-սահմանափակ հնարավորությունները թույլ են տալիս ազատորեն կազմել նորանոր բառեր և դրանցով հարստացնել մեր լեզվի բառապաշարը: Իսկ այդ հնարավորություններն էլ ավելի են մեծանում նրանով, որ լեզուն, ըստ անհրաժեշտության, օգտագործում է գրաբար և ժողովրդախոսակցական լեզուների բառակազմական կաղապարներն ու բաղադրական հիմքերը:

Յուրաքանչյուր լեզվի բառապաշար նրա առավել հարափոփոխ մասն է և ավանդապահ զանձարանը: Լեզուն հարուստ և ճկուն է համարվում թե՛ նորաբանություններով, թե՛ հնաբանություններով: Բայց միայն նորաբանությունների շնորհիվ է, որ այն երիտասարդանում է, դառնում ժամանակակից, ճկուն և համապատասխանում ժամանակակից կյանքի պահանջներին:

... *Բառերը ծնվում են*, երբ միտքը ստեղծում է նոր հասկացություն: *Բառերը զարգացում են ապրում*, երբ միտքը բառին հաղորդում է նոր նշանակու -

թում: *Բառերը մեռնում են*, երբ դրանք այլևս չեն գործածվում և մոռացու-  
թյան են մատնվում ...

Օգտագործված գրականության ցանկ

1. **Pierre Gilbert**

Dictionnaire des mots nouveaux, Hachette-Tchou, 1971.

2. **Pierre Gilbert**

Dictionnaire des mots contemporains, Paris, 1980.

3. Conseil terminologique de l'arménien  
occidental moderne, Guide 3, Marseille, 1998.

4. **E. Tchesnovitch.**

La lexicologie française: lectures. Léningrad, 1981.

5. **Н.Н. Тимескова, В.А. Тархова.**

Лексикология современного французского языка, изд.  
“Просвещение”, Ленинград, 1967.

6. **Н.Н. Лопатникова, Н.А. Мовшович.**

Лексикология современного французского языка, изд. “Высшая  
школа”, Москва, 1971.

7. **В.А. Тархова**, Хрестоматия по лексикологии французского языка  
(на французском языке), изд. “Просвещение”, Ленинград,  
1972.